



ՀԱՍՏԱՏՎԱԾ Է  
«ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ  
Խորհրդի 29.07.2011թ. թիվ 39 որոշմամբ

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ  
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ  
ԿԱՆՈՆՆԵՐ**  
(Ակտիվի դաս՝ Հրապարակային)



**ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1.1 Ընդհանուր պատասխանատվության ապահովագրության կանոնները (այսուհետև՝ Կանոններ) մշակված են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքին և այլ իրավական ակտերին համապատասխան:

1.2 «Նաիրի Ինշուրան» Ապահովագրական Սահմանափակ Պատասխանատվության ապահովագրությունը (այսուհետև՝ Ապահովագրող) կողմից իրականացվող Ընդհանուր պատասխանատվության ապահովագրությունը ներառվում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ոչ կյանքի ապահովագրության տեսակի «Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն» դասի մեջ:

1.3 Օրենքի, այլ իրավական ակտերի և Կանոնների հիման վրա Ապահովագրողը կնքում է Ընդհանուր պատասխանատվության ապահովագրության պայմանագիր և (կամ) ապահովագրության վկայագիր (այսուհետև՝ ապահովագրության վկայագիր և ապահովագրության պայմանագիր հասկացությունների փոխարեն Կանոններում կօգտագործվի «Պայմանագիր» հասկացությունը) իրավաբանական կամ ֆիզիկական անձանց հետ (այսուհետև՝ Ապահովադիր):

1.4 Պայմանագիրը կնքվում է ֆիզիկական անձանց օգտին, որոնց կյանքին, առողջությանը կամ գույքին կարող է վնաս պատճառվել կամ իրավաբանական անձանց օգտին, որոնց գույքին կարող է վնաս պատճառվել (այսուհետև՝ **Շահառու**):

1.5 Պայմանագրով Ապահովագրողը պարտավորվում է Պայմանագրում սահմանված վճարի (այսուհետև՝ ապահովագրավճար) դիմաց Պայմանագրով նախատեսված դեպքի (այսուհետև՝ ապահովագրական պատահարի) ի հայտ գալու պարագայում փոխհատուցել Ապահովադիրին կամ այլ անձին, ում օգտին կնքվել է Պայմանագիրը (այսուհետև՝ Շահառու) ապահովագրական պատահարի հետևանքով պատճառված վնասը (ապահովագրական հատուցում) Պայմանագրում սահմանված գումարի (ապահովագրական գումար) շրջանակներում:

1.6 Կանոնները կցվում են Պայմանագրին հանդիսանալով դրա անբաժանելի մասը և պարտադիր են Ապահովագրողի և Ապահովադիրի համար (այսուհետև՝ նաև Պայմանագրի կողմեր):

1.7 Պայմանագրի Կողմերը փոխադարձ համաձայնությամբ կարող են Պայմանագրով նախատեսել Կանոնների առանձին դրույթների փոփոխում, չկիրառում կամ այլ դրույթներ, որոնք չեն հակասում օրենքին և այլ իրավական ակտերին:

**ԲԱԺԻՆ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

2.1 Կանոններում օգտագործվող հասկացություններն ու արտահայտություններն ունեն հետևյալ նշանակությունները՝

**ա) Ապահովագրության օրյնկտ**՝ Ապահովադիրի գույքային շահերը՝ կապված Շահառուի կյանքին, առողջությանը կամ գույքին հասցված վնասը օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն Ապահովադիրի (Ապահովագրված անձի) կողմից հատուցելու պարտավորության հետ:

**բ) Ապահովագրվող գործունեություն**՝ իրավական ակտերին չհակասող գործունեություն, որի իրականացման դեպքում կատարվում է Ապահովադիրի քաղաքացիական պատասխանատվության ապահովագրությունը:

Սույն Կանոնների համաձայն կարող է ապահովագրվել հետևյալ գործունեությունը՝

- շենքերի, շինությունների, տարածքների, սարքավորումների, հողակտորների պահպանումը և շահագործումը,
- շինություններին տիրապետումը,
- տնտեսական գործունեությունը,
- զանգվածային հասարակական միջոցառումների կազմակերպումը և անցկացումը (ցույցեր, քայլաքառվեր և այլն),
- մարզական, մշակութային և կրթական միջոցառումների անցկացումը (ավտոմրցույթներ, մրցույթների, ներկայացումների, համերգներ, ցուցահանդեսներ, շնորհանդեսներ և այլն),
- տոնական հրավառությունների, իլյումինացիաների և այլնի կազմակերպումը,
- ընտանի և այլ կենդանի պահելը (շներ, անասուններ, էկզոտիկ կենդանիներ և այլն),
- աշխատանքային հարաբերություններում գործատուի գործունեությունը՝ ուղղված աշխատողների համար անվտանգ աշխատանքային պայմանների ստեղծմանը, նրանց իրավունքների պաշտպանությանը և այլն,
- խնամակալների և հոգաբարձուների գործունեությունը,
- շրջապատի համար բարձր վտանգավորությամբ գործունեությունը, որի իրականացման համար օրենքով և այլ իրավական ակտերով չի պարտադրվում հատուկ պայմաններով ապահովագրության իրականացում,
- դեղորայքի կլինիկական հետազոտությունների կազմակերպումը, իրականացումը և անցկացումը,
- գործունեության այլ տեսակները, որոնց իրականացումը կարող է վնաս պատճառել Շահառուների կյանքին, առողջությանը կամ գույքին:

**գ) Ապահովադիրի պատասխանատվության սահման**՝ գումար, որը չի գերազանցում Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը, և որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է վճարել ապահովագրական հատուցում յուրաքանչյուր ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում:

**դ) Ապահովագրության տարածք**՝ տարածք, որի սահմաններում Ապահովագրողը իրականացնում է ապահովագրական գործունեությունը, որի հետևանքով Պայմանագրում նշված ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում ծագում է ապահովագրական հատուցում վճարելու Ապահովագրողի պարտավորությունը: Եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապահովագրության տարածք է համարվում Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքը:

**ե) Վնասի հատուցման Շահառուի պահանջ**՝ անմիջապես (անմիջականորեն) Ապահովադիրին հասցեագրված գրավոր պահանջները (այդ թվում՝ պահանջագրի ձևով), ինչպես նաև դատարան ներկայացված հայցադիմումները վնասի պատճառման փաստի, չափերի և պատճառների վերաբերյալ հաստատված ապացույցներով: Շահառուն իրավունք չունի



անմիջականորեն Ապահովագրողին ներկայացնելու վնասի հատուցման պահանջները, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

զ) **Ապահովագրական իրադարձություն**՝ ապահովագրական պատահարի նշաններ ունեցող դեպք, որը հետագայում կարող է հանգեցնել ապահովագրական պատահարի:

**ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ**

3.1 Կանոնների համաձայն ապահովագրական ռիսկ է հանդիսանում Շահառուի կյանքին, առողջությանը կամ գույքին հասցված վնասի հետևանքով Ապահովադրի քաղաքացիական պատասխանատվության ռիսկի ծագումը, որը արդյունք է՝

- ոչ կանխամտածված անգողություն (սխալի, բացթողման),
- ապահովագրված գործունեության ընթացքում օգտագործվող նյութերի, սարքավորումների, գործիքների անսարք և անորակ լինելու և նյութերին բնորոշ առանձնահատկությունների,
- ապահովագրության տարածքում գործող, իրավական ակտերով նախատեսված այլ պատճառների:

3.2 Ապահովագրական պատահարը Պայմանագրով նախատեսված պատահական դեպք է, որի տեղի ունենալու դեպքում ծագում է Ապահովադրին (Շահառուին) ապահովագրական հատուցում վճարելու Ապահովագրողի պարտավորությունը, պայմանով, որ միաժամանակ առկա են հետևյալ պայմանները՝

- 3.2.1 Պայմանագրի գործողության ժամանակահատվածում Ապահովադրին ներկայացվել են վնասը հատուցելու Շահառուի պահանջները, եթե Պայմանագրով պահանջների ներկայացման այլ ժամկետ նախատեսված չէ:
- 3.2.2 Վնասը պատճառվել է Պայմանագրի գործողության ընթացքում կամ եթե դա նախատեսված է Պայմանագրով՝ Պայմանագրի գործողության ավարտից հետո՝ Պայմանագրի կողմերի միջև համաձայնեցված որոշակի ժամանակահատվածի ընթացքում:
- 3.2.3 Պայմանագրի կնքման ժամանակ Ապահովադիրը նախապես տեղյակ չէր ապահովագրական դեպքն առաջացրած հանգամանքների առկայության կամ դրանց առաջացման հավանական լինելու մասին:
- 3.2.4 Վնասը հասցվել է ապահովագրության տարածքում:
- 3.2.5 Գոյություն ունի պատճառահետևանքային անմիջական կապ հատուցման ենթակա վնասի և պատահարի միջև:
- 3.2.6 Ապահովադրի (ապահովագրված անձի) քաղաքացիական պատասխանատվության ծագումը (առաջացումը) ընդունվել է վերջինիս կողմից կամավոր կերպով՝ Ապահովագրողի գրավոր համաձայնության առկայությամբ, կամ օրինական ուժ է ստացել դատարանի համապատասխան որոշմամբ:

3.3 Մեկ կամ մի քանի փոխկապակցված պատահարների հետևանքով մի քանի Շահառուների կյանքին, առողջությանը կամ գույքին պատճառված վնասի հետևանքով Ապահովադրի քաղաքացիական պատասխանատվության առաջացումը դիտվում է որպես մեկ ապահովագրական պատահար:

**ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾԱԾԿՈՒՅԹԻՑ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

4.1 *Ապահովագրողը չի հատուցում ուղղակի կամ անուղղակի վնասը, եթե այն հետևանք է՝*

- 4.1.1 *Ապահովադրի (Ապահովադրի աշխատակիցների) կամ Շահառուի դիտավորության արդյունքում Շահառուի գույքին վնաս պատճառելը,*
- 4.1.2 *Վնասի պատճառումը, որը հետևանք է Ապահովադրի այնպիսի գործունեության, որի իրականացման համար նա չէ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով համապատասխան թույլատվություն (լիցենզիա, արտոնագիր և այլն) չի ստացել (թեև դրա ստացումը պարտադիր էր), կամ այդ գործունեության թույլատվությունը կասեցված է եղել,*
- 4.1.3 *Վնասի պատճառումը, որը հետևանք է ասբեստի և ասբեստ պարունակող ցանկացած արտադրանքի ազդեցության:*

4.2 *Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա **ապահովագրական պատահարներ չեն համարվում և ըստ այդմ չեն հատուցվում՝***

- 4.2.1 *Յանկացած պատերազմի կամ ռազմական գործողության (անկախ այն բանից դրանք եղել են հայտարարված, թե ոչ) և դրանց հետևանքների, քաղաքացիական պատերազմի, զինված ուժերի կամ սահաբեկիչների գործողության, ժողովրդական հուզումների հետևանքով պատճառված վնասները,*
- 4.2.2 *Ռադիոակտիվ կամ այլ իոնային ճառագայթման ազդեցության հետևանքով, այդ թվում ռադիոակտիվ ալֆա, բետա, գամմա նյութերի, նեյտրոնների արտազատման, օպտիկական (լազերային), միկրոալիքային կամ քվանտային գեներատորների արագացուցիչների թունավորված մասնիկներից արտազատվող ճառագայթման հետևանքով առաջացած վնասները,*
- 4.2.3 *Վնասը, որը պատճառվել է Ապահովադրի կողմից օրենքի, այլ իրավական ակտերի, արտադրական կանոնների, նորմերի կամ նորմատիվային փաստաթղթերի դրույթների չկատարման հետևանքով,*
- 4.2.4 *Մարդկանց, կենդանիների կամ բույսերի օրգանիզմում գենետիկ փոփոխությունների հետևանքով պատճառված վնասը,*
- 4.2.5 *Պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով պատճառված վնասը,*
- 4.2.6 *Ապահովադրի կողմից բարձր վտանգավորության աղբյուրների շահագործման կամ դրանք այլ նպատակներով օգտագործման հետևանքով պատճառված վնասը,*
- 4.2.7 *Ապահովադրի կողմից Շահառուին ՉԻԱՀ-ով վարակման հետևանքով պատճառված վնասը,*
- 4.2.8 *4.2.8 Ապահովադրի կողմից ապահովագրված գործունեություն իրականացնելու ընթացքում իրեն հայտնի դարձած առևտրային գաղտնիքի կամ այլ գաղտնի տեղեկատվության հրապարակելու կամ անձնական*



նպատակներով օգտագործելու (Ապահովադրի աշխատակիցների անձնական նպատակներով օգտագործելու) հետևանքով պատճառված վնասը,  
4.2.9 Հեղինակային իրավունքների կամ այլ մտավոր սեփականության օբյեկտների բացառիկ իրավունքների խախտման հետևանքով պատճառված վնասը,  
4.2.10 Կոնստրուկցիաների, սարքավորումների կամ նյութերի շահագործման նորմատիվային ժամկետներից ավել օգտագործման հետևանքով պատճառված վնասը,  
4.2.11 Ապահովադրի կողմից պատրաստվող (իրացվող, կատարվող կամ մատուցվող) ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) անորակ լինելու, ինչպես նաև այդ ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) օգտագործման վերաբերյալ ոչ հավաստի կամ ոչ բավարար տեղեկատվության առկայության հետևանքով պատճառված վնասը,  
4.2.12 Շահառուին պատճառված վնասը, որը հետևանք է մշտական, պարբերաբար, կամ երկարատև ջերմային ազդեցության կամ գազերի, գոլորշիների, ճառագայթների, խոնավության կամ ցանկացած, այդ թվում մթնոլորտում, առկա մասնիկների (ծուխ, փոշի և այլն), բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց ազդեցությունը հանկարծակի է կամ չկանխատեսված և կամ ակնհայտ ապացույցներ, որ այդ ազդեցության հետևանքով վնասը անխուսափելի էր:

**ԲԱԺԻՆ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԸ**

5.1 Ապահովագրական գումարն Ապահովադրի և Ապահովագրողի համաձայնությամբ որոշված դրամական արտահայտությամբ գումար է, որի սահմաններում Ապահովագրողը պատասխանատվություն է կրում Պայմանագրով և Կանոններով սահմանված իր պարտավորությունների կատարման համար:  
5.2 Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում ապահովագրական հատուցումը վճարվում է Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի սահմաններում:  
5.3 Եթե Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրողը կատարել է ապահովագրական հատուցում, ապա ապահովագրական գումարը նվազեցվում է կատարված հատուցման չափով: Ապահովադիրը կարող է դիմել Ապահովագրողին ապահովագրական գումարի նախկին չափը վերականգնելու պահանջով, որն իրականացվում է լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:  
5.4 Կողմերի համաձայնությամբ Պայմանագրում կարող են սահմանվել մեկ ապահովագրական պատահարի, ռիսկերի առանձին խմբերի և այլնի գծով պատասխանատվության սահմաններ: Այդպիսիք չլինելու դեպքում Պայմանագրում նշված Ապահովագրողի պատասխանատվության ընդհանուր սահմանը (լիմիտը) համարվում է բոլոր ռիսկերի և մեկ ապահովագրական պատահարի համար միասնական սահման:

**ԲԱԺԻՆ 6. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ (ՖՐԱՆՇԻԶԱ)**

6.1 Պայմանագրում կարող է սահմանվել չհատուցվող գումար/ֆրանշիզա (ապահովադրի մասնակցության չափ վնասի հատուցմանը), որն Ապահովագրողի և Ապահովադրի միջև համաձայնեցված գումար է կամ սահմանվում է ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ:  
6.2 Չհատուցվող գումարը կարող է լինել պայմանական կամ ոչ պայմանական:  
6.2.1 Պայմանագրում **պայմանական չհատուցվող գումար** սահմանված լինելու դեպքում Ապահովագրողը ազատվում է ապահովագրական հատուցման պատասխանատվությունից, երբ ապահովագրական հատուցման գումարը չի գերազանցում Պայմանագրով սահմանված չհատուցվող գումարի չափը, և պարտավոր է վճարել ապահովագրական հատուցումն ամբողջությամբ, երբ ապահովագրական հատուցման գումարը գերազանցում է չհատուցվող գումարի չափը:  
6.2.2 Պայմանագրում **ոչ պայմանական չհատուցվող գումար** սահմանված լինելու դեպքում Ապահովագրողը չհատուցվող գումարի չափով ազատվում է ապահովագրական հատուցում իրականացնելուց:

**ԲԱԺԻՆ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱԿԱԳԻՆ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱԿԱԳԻՆ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՉՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ**

7.1 Ապահովագրական սակագնի մեծությունը սահմանվում է Ապահովագրողի կողմից՝ ելնելով ռիսկի աստիճանից, Պայմանագրի ժամկետից, ֆրանշիզայից և Պայմանագրի այլ պայմաններից:  
7.2 Ապահովագրավճարը հաշվարկվում է ելնելով ապահովագրական սակագնից (ապահովագրական գումարի նկատմամբ ապահովագրավճարի դրույքաչափ):  
7.3 Ապահովագրավճարն ապահովագրության համար նախատեսված գումար է, որն Ապահովադիրը Պայմանագրի համաձայն պարտավոր է մուծել Ապահովագրողին:  
7.4 Պայմանագրով սահմանված կարգով՝ Ապահովադիրն ապահովագրավճարը կարող է մուծել միանվագ կամ մաս-մաս, ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ եղանակով, ինչը սահմանվում է Պայմանագրով:  
7.5 Եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 14-օրյա ժամկետում Ապահովադիրը չի վճարում միանվագ կամ առաջին հերթական ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրը, եթե Պայմանագրով նախատեսված չէ այլ ժամկետ կամ ապահովագրավճարի մուծման տարաժամկետման հնարավորություն:  
7.6 Եթե Ապահովադիրը Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում չի վճարել հերթական ապահովագրավճարը, ապա ապահովագրողն իրավունք ունի ապահովագրավճարի վճարման համար սահմանված ժամկետից երեք օր (լրացուցիչ ժամկետ) հետո միակողմանի լուծելու Պայմանագիրը՝ առանց այդ մասին Ապահովադրին ծանուցելու:



7.7 Եթե ապահովագրական պատահարը տեղի է ունեցել մինչև հերթական ապահովագրավճարի վճարումը, որը կետանցվել է, ապա ապահովագրողն իրավունք ունի վճարման ենթակա ապահովագրական հատուցման չափը որոշելիս հաշվանցելու կետանցված ապահովագրավճարի չափը:

**ԲԱԺԻՆ 8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԲԿՆՕՐԻՆԱԿԻ ՏՐԱՍԱԴՐՈՒՄԸ**

8.1 Պայմանագիրը կնքվում է Ապահովադրի կողմից Ապահովագրողի սահմանված ձևի գրավոր դիմում-հարցաթերթիկի հիման վրա, որում պետք է պարունակվեն ապահովագրության օբյեկտի վերաբերյալ պահանջվող տեղեկությունները, բացառությամբ կանոնների 8.2 կետով սահմանված դեպքի:

8.2 Պայմանագիրն անհրաժեշտության դեպքում կարող է կնքվել Ապահովադրի բանավոր դիմումի հիման վրա, պայմանով, որ Պայմանագրում ընդգրկվեն ապահովագրության օբյեկտի վերաբերյալ Ապահովագրողի կողմից պահանջվող տեղեկությունները:

8.3 Պայմանագիր կնքելիս Ապահովադիրը պետք է Ապահովագրողին տեղեկացնի իրեն հայտնի բոլոր այն հանգամանքների մասին, որոնք էական նշանակություն ունեն ռիսկի գնահատման համար:

8.4 Պայմանագրի կնքման (ապահովագրության իրականացման) փաստը հավաստվում է Ապահովագրողի կնիքով և գործադիր տնօրենի կամ համապատասխան լիազորված անձի ստորագրությամբ Ապահովադիրն կամ նրա լիազորված ներկայացուցչին Պայմանագրի հանձնելու պահից:

8.5 Պայմանագրի գործողության ժամկետը նշվում է Պայմանագրում:

8.6 Պայմանագրով ապահովագրության ժամկետը սովորաբար սահմանվում է մինչև մեկ տարի տևողությամբ: Ապահովադիրը և Ապահովագրողը կարող են համաձայնության գալ Պայմանագրում ապահովագրության մեկ տարուց ավելի երկար ժամկետ սահմանելու համար:

8.7 Ապահովագրողը պատասխանատվություն է կրում այն ապահովագրական պատահարի համար, որը տեղի է ունեցել Պայմանագրի գործողության ընթացքում:

8.8 Պայմանագրի կորստի դեպքում, Ապահովադրի դիմումի հիման վրա, Ապահովագրողը երկու աշխատանքային օրվա ընթացքում Ապահովադիրին է տրամադրում Պայմանագրի կրկնօրինակը, իսկ Պայմանագրի կորած օրինակը համարվում է անվավեր և դրանով ապահովագրական հատուցում չի կատարվում:

**ԲԱԺԻՆ 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅՈՒՆԸ**

9.1 Պայմանագիրը վաղաժամկետ լուծվում է՝

- ա) Կողմերի համաձայնությամբ.
- բ) Ապահովադրի, եթե այն իրավաբանական անձ է՝ լուծարման, իսկ եթե ֆիզիկական անձ է՝ մահվան դեպքում.
- գ) Պայմանագրով նախատեսված բոլոր պարտավորություններն Ապահովագրողի կողմից կատարելու դեպքում.
- դ) օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով կամ Պայմանագրով նախատեսված այլ դեպքերում

9.2 Ապահովադիրն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին ոչ պակաս քան 15 օր առաջ ծանուցելով Ապահովագրողին:

9.3 Ապահովադրի կողմից Պայմանագրից վաղաժամկետ հրաժարվելու դեպքում՝ վերջինիս վերադարձվում են Պայմանագրի չլրացած ժամկետի համար մուծված ապահովագրավճարը՝ մասնահանելով ապահովագրավճարի 30 տոկոսի չափով գործավարման ծախսեր, եթե Պայմանագրով կամ Կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ:

9.4 Այն դեպքում, երբ Ապահովադրի կողմից Պայմանագրի վաղաժամկետ լուծումը պայմանավորված է Ապահովագրողի կողմից Պայմանագրի պայմանների խախտմամբ, ապա վերջինս Ապահովադիրին է վերադարձնում վճարված ապահովագրավճարները՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

9.5 Ապահովագրողի պահանջով Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադիրն են վերադարձվում ապահովագրավճարները՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, բացառությամբ Կանոնների 9.6 կետով նախատեսված դեպքի:

9.6 Պայմանագիրը կարող է Ապահովագրողի պահանջով վաղաժամկետ լուծվել՝ Ապահովադրի կողմից օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով կամ Պայմանագրով նախատեսված իր պարտականությունները չկատարելու դեպքում, որի ժամանակ Ապահովադիրն է վերադարձնում ապահովագրավճարը՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, իսկ ապահովագրավճարի հաշվարկման համար որպես հիմք ընդունվում է Պայմանագրի համաձայն Ապահովադրի կողմից վճարված ապահովագրավճարի 50 տոկոսը, եթե Պայմանագրով կամ Կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ:

9.7 Ապահովագրողի լուծարման դեպքում, վերջինս պարտավոր է Ապահովադիրին վերադարձնել Պայմանագրի չլրացած ժամկետի համար մուծված ապահովագրավճարը:

9.8 Պայմանագրի Ապահովադրի կողմից վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադիրն չեն վերադարձվում ապահովագրավճարները, եթե Ապահովադիրը տվյալ Պայմանագրի գծով դիմել է ապահովագրական հատուցում ստանալու համար և ապահովագրական հատուցման հայտը Ապահովագրողի կողմից դեռևս չի կարգավորվել (մինչև հայտի կարգավորումը) կամ ստացել է տվյալ Պայմանագրով սահմանված ապահովագրավճարի կեսից ավելի չափով ապահովագրական հատուցում, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

9.9 Պայմանագիրն առոչինչ կամ անվավեր է համարվում օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով կամ Պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով:

**ԲԱԺԻՆ 10. ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ**



10.1 Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադիրը պարտավոր է անհապաղ տեղեկացման փաստը հավաստող ցանկացած եղանակով (իսկ բոլոր դեպքերում պատահարը տեղի ունենալուց ոչ ուշ, քան 3 օրվա ընթացքում՝ գրավոր) տեղյակ պահել Ապահովագրողին Պայմանագրի կնքման պահին իր կողմից Ապահովագրողին ներկայացված հանգամանքների վերաբերյալ կատարված փոփոխությունների մասին:

10.2 Ապահովագրողը, ծանուցված լինելով ռիսկի աստիճանի մեծացման հանգամանքների մասին, իրավունք ունի Ապահովադիրից պահանջել Պայմանագրի պայմանների փոփոխում կամ ռիսկի աստիճանի մեծացման չափին համապատասխան լրացուցիչ ապահովագրավճարի մուծում:

**ԲԱԺԻՆ 11. ԱՊԱՀՈՎԱԳՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**11.1 Ապահովադիրը պարտավոր է՝**

ա) Պայմանագրում նշված ԿԱՐԳՈՎ ԵՎ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՄՈՒԾԵԼ ապահովագրավճարը.

բ) Պայմանագրի կնքման ժամանակ և դրանից հետո Ապահովագրողին ՀԱՅՏՆԵԼ ապահովագրական ռիսկի գնահատման համար ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՅՈՂ՝ իրեն հայտնի բոլոր ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

գ) Ապահովագրողին ՀԱՅՏՆԵԼ ապահովագրական օբյեկտի գծով առկա այլ ապահովագրության պայմանագրերի մասին.

դ) ապահովագրական իրադարձության տեղի ունենալու մասին իրեն հայտնի դառնալու դեպքում ԱՆՀԱՊԱՂ, տեղեկացման փաստը հավաստող ՅԱՆԿԱՅԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ (հեռախոս, ֆաքս և այլն) տեղեկացնել Ապահովագրողին այդ պատահարի տեղի ունենալու մասին՝ նշելով պատահարի հանգամանքների մասին իրեն հայտնի անհրաժեշտ տեղեկատվությունը և ՈՉ ՈՒՇ, ՔԱՆ Ապահովադիրին վնասի պատճառման մասին ՀԱՅՏՆԻ ԴԱՌՆԱԼՈՒ ԱՍՍԱԹՎԻՑ ՀԵՏՈ 72 ԺԱՄՎԱ ԸՆԹԱՅՔՈՒՄ՝ այդ մասին գրավոր հայտնել Ապահովագրողին:

ե) երրորդ անձանց կողմից վնասի հատուցման վերաբերյալ պահանջի ներկայացման (պատահարի առաջացման) դեպքում այդ մասին (այդ թվում՝ գրավոր) ՈՉ ՈՒՇ, ՔԱՆ 48 ԺԱՄՎԱ ԸՆԹԱՅՔՈՒՄ տեղյակ պահել Ապահովագրողին: Եթե Ապահովադիրն Ապահովագրողին չի հայտնել պատահարի մասին սույն ենթակետում նշված կարգով և ժամկետում, ապա Ապահովագրողը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1017 հոդվածի 2-րդ մասի համաձայն ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՉՎՃԱՐԵԼՈՒ ապահովագրական հատուցումը, եթե չապացուցվի, որ Ապահովագրողը ժամանակին իմացել է ապահովագրական պատահարի վրա հասնելու մասին կամ, որ այդ մասին Ապահովագրողի մոտ տեղեկությունների բացակայությունը չէր կարող ազդել ապահովագրական հատուցում վճարելու նրա պարտականության վրա.

զ) մինչև Ապահովագրողի կողմից գործի ուսումնասիրելը, հետաքննելը և որոշում կայացնելը, Շահառուի հայցադիմումով դատարան ներկայանալու դեպքում այդ մասին ԱՆՀԱՊԱՂ հայտնել Ապահովագրողին, վերջինիս լիազորելով հանդես գալ Ապահովադիրի անունից դատավարության, տարվող բանակցությունների և այլ հարցերի շուրջ:

է) ապահովագրական իրադարձության առաջացման դեպքում ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐ ՉԵՌՆԱՐԿԵԼ Շահառուի կյանքին, առողջությանը և գույքին հասցված վնասը կանխելու կամ նվազեցնելու ուղղությամբ, հետևելով Ապահովագրողի ցուցումներին, եթե այդպիսիք տրվել են.

ը) Ապահովագրողին ՆԵՐԿԱՅԱՅՆԵԼ պատահարի վերաբերյալ իրեն հայտնի ԲՈԼՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՓԱՍՏԱԹՎԵՐԸ, որոնք հնարավորություն կտան պարզել պատահարի պատճառներն ու վնասի չափը.

թ) առանց Ապահովագրողի համաձայնության ԵՐՐՈՐԴ ԱՆՉԻՆ ՉՎՃԱՐԵԼ ԿԱՄ ՉՏԱԼ վնասի հատուցման վերաբերյալ ոչ մի ուղղակի կամ անուղղակի պարտավորության իրականացման ԵՐԱՇԽԻՔՆԵՐ.

ժ) պատճառված վնասի չափի որոշման ժամանակ ԱՊԱՀՈՎԵԼ Ապահովագրողի կամ նրա ներկայացուցչի ՊԱՐՏԱԿԻՐ ՍԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ.

Ճա) ԿԱՏԱՐԵԼ օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով և Պայմանագրով իրեն վերապահված ԱՅԼ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

**11.2 Ապահովադիրն իրավունք ունի՝**

ա) Ապահովագրողից պահանջել որպեսզի վերջինս ներկայացնի իր պետական գրանցումը և գործունեության թույլտվությունը հավաստող փաստաթղթերը (պետական գրանցման վկայական, լիցենզիա).

բ) ծանոթանալ Կանոններին.

գ) Ապահովագրողի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական բրոքերների կամ ապահովագրական գործակալի միջոցով.

դ) օրենքի, այլ իրավական ակտերի, Կանոնների և Պայմանագրի համաձայն ստանալ ապահովագրական հատուցում.

ե) Պայմանագիրը կորցնելու դեպքում ստանալ դրա կրկնօրինակը.

զ) իրականացնել օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով և Պայմանագրով իրեն վերապահված կամ չարգելված այլ գործառնություններ:

**ԲԱԺԻՆ 12. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**12.1 Ապահովագրողը պարտավոր է՝**

ա) Ապահովադիրին ծանոթացնել Կանոններին և Պայմանագրի պայմաններին.

բ) Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում ապահովագրական հատուցում վճարել Ապահովադիրին.

գ) ապահովագրական գումարի և պատճառված վնասի մեծության սահմաններում հատուցել Ապահովադիրի այն ծախսերը, որոնք ողջամտության սահմաններում կատարվել են ապահովագրական պատահարի ընթացքում վնասների կանխման կամ նվազեցման նպատակով կամ Ապահովագրողի ցուցումներին համապատասխան.

դ) չիրապարակել կամ այլ կերպ չտարածել Ապահովադիրի անձնական շահերի, գույքային դրության և առևտրային կամ բանկային գաղտնիք պարունակող տեղեկությունները.



ե) կատարել օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով և Պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

**12.2 Ապահովագրողն իրավունք ունի՝**

ա) ստուգել Ապահովադրի կողմից ներկայացված տվյալների իսկությունը և Ապահովադրի կողմից ռիսկի աստիճանի գնահատման կամ վնասի չափի որոշման վրա ազդող կանխամտածված սխալ տեղեկություններ ներկայացնելու փաստը ապացուցելու դեպքում վաղաժամկետ դադարեցնել Պայմանագրի գործողությունը,

բ) ինքնուրույն պարզել, իսկ անհրաժեշտության դեպքում հրավիրել անկախ մասնագետի (փորձագետի)՝ ռիսկի աստիճանը կամ պատճառված վնասի հանգամանքները և (կամ) չափը որոշելու համար,

գ) Ապահովադրի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական բրոքերի կամ ապահովագրական գործակալի միջոցով.

դ) հարցումով դիմել համապատասխան լիազոր (իրավասու) մարմիններ ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը և պատճառները հաստատող փաստաթղթեր կամ այլ տեղեկությունները ստանալու նպատակով.

ե) ավելացնել ապահովագրավճարի չափը կամ դադարեցնել Պայմանագիրը, եթե Պայմանագրի գործողության ընթացքում տեղի է ունեցել ապահովագրական ռիսկի մեծացում,

զ) օրենքի, այլ իրավական ակտերի, Կանոնների և Պայմանագրի համաձայն մերժել ապահովագրական հատուցման վճարումը,

է) իրականացնել օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով և Պայմանագրով իրեն վերապահված կամ չարգելված այլ գործառնություններ:

**ԲԱԺԻՆ 13. ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

13.1 Ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա) գրավոր դիմում,

բ) Պայմանագրի իր օրինակը,

գ) Ապահովադրի (Շահառուի) իրավաբանական անձի լինելու դեպքում՝ նրա կանոնադրության և պետական գրանցման վկայականի պատճենները, անհատ ձեռներեց լինելու դեպքում՝ պետական գրանցման վկայականի պատճենը,

դ) Պետական մարմինների կողմից սահմանված կարգով տրված Ապահովադրի համապատասխան գործունեություն իրականացնելու իրավունքը հավաստող փաստաթղթի պատճենը (թույլտվություն, լիցենզիա),

ե) պատճառված վնասի հանգամանքներին, պատճառներին և չափերին վերաբերող փաստաթղթերը կամ դրանց պատճենները (վնասված գույքի հետազոտման ակտեր, հաշիվ ապրանքագրեր, գնման պահանջագրեր, կտրոններ, անդորրագրեր, փորձագիտական եզրակացություններ և այլն), այդ թվում համապատասխան իրավասու պետական մարմինների կողմից տրված փաստաթղթերը՝

- հրդեհի դեպքում՝ հրշեջ ծառայության կողմից տրված եզրակացությունը,
- պայթյունի, փլուզման կամ այլ վթարների դեպքում՝ համապատասխան վթարային ծառայության կողմից տրված ակտը,
- քրեական գործի հարուցման կամ հարուցման մերժման վճռի մասին գրավոր հաղորդագրությունը (փաստաթուղթը) կամ դրա պատճենը, այն բոլոր դեպքերում, երբ վնասի առաջացման պատճառների հանգամանքների քննությանը մասնակցում են ռադիկալությունը, դատախազությունը և այլ իրավապահ մարմինները,

զ) դատարանի որոշումը, դատական մարմինների ակտերը (գործը դատարանում քննվելու դեպքում) կամ դրանց պատճենները,

է) բժշկական հաստատությունների կողմից տրված և գլխավոր բժշկի (տնօրենի) կողմից ստորագրված փաստաթղթերը կամ բժշկական փորձաքննության մարմնի եզրակացությունը (ֆիզիկական անձի առողջությանը պատճառված վնասի դեպքում),

ը) մահվան վկայականի և ժառանգության իրավունքները հավաստող փաստաթղթերի պատճենները (Շահառու հանդիսացող ֆիզիկական անձի մահվան դեպքում),

թ) քաղաքացիական անձնագրի (զինվորականների համար անձը հաստատող փաստաթղթի) պատճենը, եթե Ապահովադիրը (Շահառուն) հանդիսանում է ֆիզիկական անձ,

ժ) Շահառուին պատճառված վնասի Ապահովադրի կողմից հատուցման ծախսերը հաստատող փաստաթղթերը:

13.2 Ապահովագրողն իրավունք ունի կրճատել վերը նշված փաստաթղթերի ցանկը կամ Ապահովադրից պահանջել լրացուցիչ այլ փաստաթղթեր, եթե հաշվի առնելով դեպքի հետ կապված կոնկրետ հանգամանքները, դրանց բացակայությունը անկարելի է դարձրել ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստի ճանաչումը և վնասի չափի որոշումը:

13.3 Ապահովադիրը (Շահառուն) ՊԱՐՏԱՎՈՐ Է անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել պատահարի վերաբերյալ Ապահովագրողին ԳՐԱՎՈՐ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՅՆԵԼՈՒ ՕՐՎԱՆԻՑ ԵՐԵՔ ԱՍՍՎԱ ԸՆԹԱՅՔՈՒՄ, հակառակ դեպքում Ապահովագրողը Ապահովադրի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով մերժում է ապահովագրական հատուցման վճարումը, սույն կետում սահմանված ժամկետը լրանալուց հետո հինգ օրվա ընթացքում:

13.4 Այն դեպքում, երբ Ապահովադիրը գրավոր միջնորդություն է ներկայացնում փաստաթղթերի ներկայացման խոչընդոտների կամ այլ պատճառաբանությամբ սահմանված ժամկետը երկարացնելու մասին, Ապահովագրողը, ելնելով տվյալ գործի հանգամանքներից, կարող է այդ ժամկետը երկարաձգել մինչև վեց ամիս ժամկետով: Այդ ժամկետում Ապահովադրի կողմից սահմանված պարտավորության չկատարման հետևանքները նույնանում են Կանոնների 13.3 կետով սահմանված դրույթների հետ:



13.5 Ապահովագրողը կամ նրա կողմից լիազորված անձը կարող են կազմել վթարային հավաստագիր: Այդ նպատակով նրանք իրավունք ունեն ապահովագրական պատահարի հետ կապված լրացուցիչ տվյալներ հավաքագրել իրավապահ մարմիններից, պետական կառավարման մարմիններից, կազմակերպություններից կամ այլ անձանցից, որոնք տիրապետում են պատահարի առաջացման հանգամանքների մասին տեղեկատվությանը:

13.6 Ապահովագրողը պատահարի առաջացումից հետո կարող է դիմել անկախ փորձագետների՝ ապահովագրական պատահարի պատճառները բացահայտելու և վնասի չափը ճշտելու համար, ինչպես նաև ապահովագրական հատուցման չափը որոշելիս հիմնվելու վերջիններիս եզրակացությունների վրա:

13.7 Ապահովագրողն իրավունք ունի անձամբ հետաքննելու և պարզելու ապահովագրական պատահարի հանգամանքները և պատճառները:

13.8 Ապահովագրական հատուցման վճարումը կարող է հետաձգվել, եթե՝

13.8.1 նշանակված է լրացուցիչ փորձաքննություն ապահովագրական դեպքի հետևանքով առաջացած վնասի մեծության որոշման նպատակով,

13.8.2 ապահովագրական պատահարի փաստի առիթով հարուցված է քրեական գործ,

13.8.3 Ապահովագրողի կամ Շահառուի ապահովագրական հատուցման ստացման իրավասությունների վերաբերյալ կան հիմնավոր կասկածներ,

13.8.4 Կանոններով հատուցման վճարմանը խանգարող այլ իրավիճակների առկայության դեպքում:

13.9 Եթե ապահովագրական պատահարի հանգամանքների վերաբերյալ իրավասու մարմինների կողմից տրված փաստաթղթերից բխի, որ Ապահովագրողի և տուժած անձի մեղավորությունը երկկողմանի համահավասար է, ապա Ապահովագրողն իրավունք ունի տուժած անձին վճարել ապահովագրական հատուցում՝ կախված ապահովագրական պատահարում նրա ունեցած մեղքի աստիճանից: Այդ մեղքի աստիճանը որոշվում է ներկայացված փաստաթղթերի հիման վրա և Պայմանագրի կողմերի համաձայնությամբ, իսկ փոխհամաձայնության չգալու դեպքում՝ դատական կարգով:

13.10 *Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցման մերժելու հիմք են հանդիսանում՝*

13.10.1 *Ապահովագրողի, նրա ներկայացուցչի կամ Շահառուի կողմից պատահարի առաջացմանն ուղղված կանխամտածված անօրինական գործունեությունը, որը որակվում է դատարանի կամ քննչական մարմինների փաստաթղթերի համաձայն.*

13.10.2 *Ապահովագրողի կողմից ապահովագրության օբյեկտի վերաբերյալ դիտավորյալ ոչ հավաստի տեղեկություններ ներկայացնելը, բացառությամբ այն դեպքերի, որոնք էական նշանակություն չեն ունեցել ապահովագրական ռիսկի գնահատման համար.*

13.10.3 *օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով կամ Պայմանագրով նախատեսված այլ դեպքեր:*

13.11 Ապահովագրական հատուցման վճարման մերժումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

13.12 Ապահովագրողն ապահովագրական պատահարի մասին օրենքով, այլ իրավական ակտերով և Կանոններով նախատեսված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո 5 օրվա ընթացքում պարտավոր է օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն ընդունել ապահովագրական հատուցումը վճարելու կամ մերժելու մասին եզրակացություն (որոշում):

13.13 Ապահովագրողն ապահովագրական հատուցումը վճարելու մասին որոշումը պատշաճ կերպով՝ Ապահովագրողին (Շահառուին) անձամբ հանձնելու միջոցով կամ Ապահովագրողի (Շահառուի) հասցեով փոստային առաքմամբ, տրամադրում է Ապահովագրողին (Շահառուին):

13.14 Ապահովագրական հատուցման նվազեցման կամ հատուցման մերժման դեպքում Ապահովագրողի կայացրած պատճառաբանված որոշումը հնգօրյա ժամկետում պատվիրված նամակով առաքվում է Ապահովագրողին (Շահառուին)՝ նրա մշտական գործունեության կամ բնակության հասցեով:

13.15 Ապահովագրական հատուցում իրականացնելու մասին որոշում կայացնելու օրվանից 20 օրվա ընթացքում Ապահովագրողը պարտավորվում է միանվագ իրականացնել ապահովագրական հատուցումը, եթե Ապահովագրողը և Ապահովագրողի (Շահառուն) ապահովագրական հատուցման վճարման այլ կարգ կամ ժամկետ չեն համաձայնեցրել:

**ԲԱԺԻՆ 14. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՈՐՈՇՈՒՄԸ**

14.1 Ապահովագրական հատուցման չափը որոշվում է Ապահովագրողի կողմից՝ այն փաստաթղթերի հիման վրա, որոնք հաստատում են ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը և պատճառված վնասի չափերը:

14.2 Ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստի ճանաչման դեպքում Ապահովագրողը Կանոնների համաձայն իրականացնում է ապահովագրական հատուցում ապահովագրական պատահարի հետևանքով Շահառուին հասցված վնասի չափով, բայց ոչ ավել, քան Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի չափը, իսկ Պայմանագրով յուրաքանչյուր ապահովագրական պատահարի (ռիսկի) համար առավելագույն պատասխանատվության չափ սահմանված լինելու դեպքում՝ այդ սահմանված չափը:

14.3 Կանոններում վնաս ասելով պետք է հասկանալ՝

14.3.1 Կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հետ կապված Շահառուի կրած ծախսերը, որոնք վճարվում են համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված չափերի: Դրանք են՝

- աշխատավարձը, որից ֆիզիկական անձ հանդիսացող Շահառուն գրկվել է հաշմանդամության կամ առողջությանը պատճառված այլ վնասի հետևանքով առաջացած աշխատունակության կորստի կամ դրա նվազման պատճառով,

- առողջության վերականգման համար լրացուցիչ ծախսերը (բուժման ծախսեր, լրացուցիչ սնունդ, դեղորայքի ձեռքբերում, պրոթեզավորում, կողմնակի խնամք, սանիտարա-կուրորտային բուժում, հատուկ տրանսպորտային միջոցների, սայլակների ձեռքբերում, եթե սահմանված է, որ տուժող անձը թվարկված օգնությունների և խնամքի կարիքն ունի և չունի





**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ  
ԿԱՆՈՆՆԵՐ**

դրանց անվճար ստացման իրավունք), հարկադրաբար մասնագիտությունը փոխելու համար անհրաժեշտ վերադասակարգման ծախսերը,

- աշխատավարձի մասը, որից ֆիզիկական անձ հանդիսացող Շահառուի մահվան դեպքում գրկվել են նրա խնամակալության տակ գտնվող կամ նրանից նյութական միջոցներ ստանալու իրավունքներ ունեցող անաշխատունակ անձինք,

- հուղարկավորության ծախսերը:

14.3.2 Ծախսերը, որոնք գույքային վնասի պատճառման հետևանքով կրել է Շահառուն: Այդ ծախսերը որոշվում են **գույքի վնասման կամ ոչնչացման արդյունքում առաջացած իրական չափով**, ինչպես նաև **խախտված իրավունքների վերականգմանն ուղղված ծախսերով**, մասնավորապես՝

- գույքի լրիվ ոչնչացման դեպքում իրական վնասը հավասար է ոչնչացված գույքի իրական արժեքին՝ հանած մաշվածությունը և օգտգործման ենթակա մնացորդների արժեքը,

- գույքի մասնակի վնասվելու դեպքում իրական վնասը որոշվում է ծախսերի այն չափով, որոնք անհրաժեշտ են վնասված գույքը մինչև ապահովագրական պատահարի տեղի ունենալու վիճակը բերելու համար:

14.4 Վնասված գույքը մինչև ապահովագրական պատահարի տեղի ունենալու վիճակին բերելու անհնարինության դեպքում, իրական վնասը որոշվում է այն գումարով, որի չափով նվազել է գույքի իրական արժեքն ապահովագրական պատահարի տեղի ունենալու հետևանքով:

14.5 Եթե գույքի մասնակի վնասման դեպքում վերջինիս վերականգման ծախսերը մեծ լինեն գույքի իրական արժեքից, ապա որպես ապահովագրական հատուցման չափ կընդունվի տվյալ գույքի իրական արժեքը:

14.6 Կանոններում **խախտված իրավունքների վերականգմանն ուղղված ծախսեր** ասելով հասկանում ենք Շահառուի կողմից հետևյալ ծառայությունների համար վճարված ծախսերը՝

- մասնագիտացված, սերվիսային, վերանորոգման կազմակերպություններին (ծառայություններին)՝ վնասված գույքը քանդելու, վերանորոգելու, հավաքելու, կորցրածի փոխարեն նոր գույք առաքելու համար,
- կենցաղային սպասարկման ձեռնարկության, քիմաքսքման, լվացքատան ծառայությունների դիմաց,
- փրկարար ծառայությանը, եթե տեղի ունեցած հանգամանքներով նրանց կանչը արդարացված է,
- վարձույթային կազմակերպություններին, որոնք գույքի վերանորոգման ժամանակահատվածում տրամադրել են վնասված գույքին փոխարինող գույք, և եթե այդ գույքի բացակայությունը կփոխեր Շահառուի կյանքի առօրյա բնույթը կամ կհանգեցներ լրացուցիչ վնասների,
- այլ ծառայությունների, ձեռնարկությունների, կազմակերպությունների, եթե դրանց մասնակցությունը վնասների կարգավորման հարցում Ապահովագրողի կողմից ճանաչվում է հիմնավորված և նպատակային:

14.7 Հայցերի (դիմումների) մինչդաստական կարգով կարգավորման դեպքում պատճառված վնասի չափը Ապահովագրողի կողմից որոշվում է ապահովագրական պատահարի փաստը, հանգամանքները, ապահովագրական պատահարի հետևանքով վնասի չափը հավաստող փաստաթղթերի հիման վրա: Հայցերի (դիմումների) մինչդաստական կարգով կարգավորման դեպքում ապահովագրական հատուցում իրականացնելու համար բավարար հիմքերի բացակայությամբ պայմանավորված Ապահովագրողն ապահովագրական հատուցում իրականացնելու մասին որոշումն ընդունում է դատական մարմինների որոշման հիման վրա:

14.8 Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում, Ապահովագրողն Ապահովադրին հատուցում է հետևյալ լրացուցիչ ծախսերը՝

14.8.1 Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա վնասների նվազեցման նպատակով Ապահովադրի կողմից կատարած ծախսերը, եթե այդպիսի ծախսերը անհրաժեշտ են եղել կամ կատարվել են Ապահովագրողի ցուցումների համաձայն,

14.8.2 ապահովագրական պատահարի գործը դատական մարմիններում վարելու համար Ապահովադրի կատարած ծախսերը, եթե դրանք կատարվել են Ապահովագրողի գրավոր ցուցումներին համաձայն կամ նրա գրավոր համաձայնությամբ,

14.8.3 Ապահովագրական պատահարի հետ կապված պատճառների և հանգամանքների պարզաբանման նպատակով Ապահովադրի կողմից կատարված անհրաժեշտ և նպատակահարմար ծախսերը, եթե դրանք կատարվել են Ապահովագրողի գրավոր համաձայնությամբ:

14.9 Ապահովագրական հատուցման վճարումը կատարվում է Շահառուին կամ Ապահովադրին, եթե վերջինս Ապահովագրողի հետ գրավոր համաձայնությամբ հատուցել է Շահառուին պատճառված վնասը: Ապահովագրական հատուցման վճարումը Ապահովադրին միանվագ կարող է կատարվել նաև եթե օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում Ապահովադիրը պարտավոր է պատճառված վնասի համար վճարել հատուցում ամսեկան կամ այլ պարբերական մուծումներով:

14.10 Եթե ապահովագրական պատահար տեղի ունենալու օրը Ապահովադրի քաղաքացիական պատասխանատվությունը երրորդ անձանց նկատմամբ ապահովագրված է նաև այլ ապահովագրական ընկերություններում, ապա Ապահովագրողն ապահովագրական հատուցում է վճարում այն չափով, որքանով որ Ապահովագրողի Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը համամասնական է բոլոր այլ ապահովագրության Պայմանագրերով սահմանված ընդհանուր ապահովագրական գումարների հանրագումարին:

14.11 Կանոնների համաձայն հատուցման ենթակա չեն Ապահովադրի կողմից վճարման ենթակա տույժերը, տուգանքները, այլ պատժամիջոցները:

14.12 Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա Կանոնների համաձայն հատուցման ենթակա չեն՝

ա) չստացված շահույթը (եկամուտը), որը Շահառուն կստանար առօրյա քաղաքացիական շրջանառության պայմաններում, եթե նրա իրավունքները խախտված չլիներին (բաց բողոքված շահույթ),



բ) զաղաքացուն պատճառված բարոյական վնասը կամ իրավաբանական անձի գործարար համբավին պատճառված վնասը:

14.13 Եթե Շահառուին պատճառված վնասը ենթակա է հատուցման ոչ միայն Ապահովադրի կողմից, այլ նաև վնասի պատճառման համար պատասխանատու այլ անձանց կողմից, ապա Ապահովագրողը հատուցում է Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի սահմաններում պատճառված վնասի և այն գումարի տարբերության չափը, որը պատճառված վնասի համար պատասխանատու անձանցից ենթակա է առգրավման (գանձման):

14.14 Ապահովադիրը ՊԱՐՏԱՎՈՐ Է Ապահովագրողին տեղեկացնել այդպիսի անձանց առկայության և այդպիսի անձանցից գանձման ենթակա հատուցման գումարների մասին:

#### **ԲԱԺԻՆ 15. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ**

15.1 Պայմանագրի գործողության ընթացքում առաջացող բոլոր վեճերը լուծվում են Կողմերի միջև անմիջական բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում, վեճերը լուծվում են դատական կարգով՝ օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան:

15.2 Վիճելի հարցերի լուծման ժամանակ Պայմանագրի դրույթները գերակա են Կանոնների դրույթների նկատմամբ:

15.3 Վեճերի առաջացման դեպքում Կանոններով չկարգավորված հարցերը կարգավորվում են օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով: